4313
հայերէն

2000

3419-шг

Г. [illegible]
1823



# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ·







Ըստ Ուղղութեան Եկեղեցեացս Հայաստանեայց:

Ի թուականութեանս Հայոց՝ ՌՄՀԷ յունս ամ:

Ի Տպարանի մայր սբ. Էջմիածնի.
Ի Կոստանդնուպօլիս քաղաքի.



Օրէնք որկանելոյ սպաս եկեղեցւոյ. Յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել:

Պարտի այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ:

Մտցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագօքն ուր զգեստքն են պատրաստեալ:

Եւ զգեցեալ պաշտօնէիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի:

Ասասցեն սաղ. Սաղմոս. ճլա. Կցրդ.

ՔԱՀԱնայք քո զգեցցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն. փոխ.

Յիշեա տէր զդաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ տն. եւ ուխտս եդ այյ յակոբայ:

Թէ ոչ մտից ի յարկս տան իմոյ. թէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Թէ տաց քուն աչաց իմոց. կամ նինջ արտեւանանց իմոց. կամ հանգիստ իրանաց իմոց. մինչեւ գտից տեղի յարկի տն աստուծոյ յակոբայ:

Ահա լուաք զնմանէ յեփրաթայ. եւ գտաք զնա ի դաշտս մայրեաց:

Մտցուք ի յարկս նորա. երկիրպագցուք ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա:

Արի տէր ի հանգիստ քո դու եւ տապանակ կտակի սրբութեան քո:

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վասն դաւթի ծառայի քո. մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ:

Երդուաւ տէր դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ եւ զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Որդիք

29039-63
Гос. библиотека ՀԱՅԱ-Арм ССР им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քոյ։

Հաճեցաւ տէր ընդ սիոն. և ընտրեաց բնակել ի նմա. ասէ՝ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից. ի սմա բնակեցայց՝ զի հաճեցայ ընդ սա։

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից. և զաղքատս սորա լցուցից հացիւ։

Զքահանայս սորա զգեցուցից փրկութիւն. և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։

Անդ ծագեցից եղջիւր ի Դաւիթ. պատրաստ արարից ճրագ օծելոյ իմոյ։

Զթշնամիս սորա զգեցուցից զամօթ. և ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։

Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Այժ՟։

Ա

Եւ քարոզեսցէ Սարկաւագն.

Եւ ևս խաղաղութ՟ն զՏ՟ր աղաչեսցուք։

Խնդրեսցուք Հաւատով միաբանութ՟բ ի Տ՟նէ,

Զի ողորմութեան իւր շնորհս իւր արասցէ ի վերայ մեր։

Ամենակալ Տ՟ր Ա՟ծ մեր,

Կեցուսցէ Եւ ողոր՟։

Եւ Ասացեն Երկտասան

Տ՟ր ողորմեայ.

✠✠✠✠✠✠✠✠✠✠✠✠✠✠✠✠✠✠

Ո՛վ սրբազան պատարագիչ Յիսուս Յաղօթս Քոյս Զմատակարար Գործարանիս։

Եւ զհոգիս Ննջեցելոց նորին ի Ք՟ս Յ՟ս։





Աղօթք Առանձնական Պատարագիչ Քահանային Յառաջ քան զզգեստաւորիլն.

# ՈՐ ԶԳԵ

## ՑԵԱԼ ԵՍ ԶԼՈՅՍ ՈՐՊԷՍ

հանդերձ տէր մեր Յս Քս: Անճառելի խոնարհութեամբ յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար: Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի և զարդարեցեր զեկեղեցի քո սբ: Տէր ամենակալ որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ: Արժանի արա և զիս ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո: Որ համարձակեցայ մերձենալ ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց: Որպէս զի զամ ամբարշտութիւն մերկացայց որ է հանդերձ պղծութեան, և զարդարեցայց լուսով քով. ընկեա յինէն զչարիս իմ, և թօթափեսցես զյանցանս իմ: Որպէս զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ ի քէն: Շնորհեա ինձ քահանայական

ա փա

փառօք մտանել ՚ի սպաշտօն սրբութեանց քոց, ընդ այնոսիկ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո: Օ՛ն և ես պատրաստ գըտայց երկնաւոր առագաստիդ ընդ իմաստուն կուսանսն. փառաւորել զքեզ Քս՛ որ բարձեր զմեղս ամենեցուն: Օ՛ն դու ես սրբութիւն անձանց մերոց և քեզ բարերարիդ Տյ վայելէ փառք իշխա″:

Եւ մատուցեալ Սարկաւագն՝ Զգեցուցեն նմա զհանդերձն աւելով. Եւ ես խաղաղութեան: Քահանայն Օրհնութիւն: Եւ յետ օրհնութեան՝ դիցէ յառաջ զխոյրն ՚ի գլուխն և ասասցէ.

ԻՐ ՏԷՐ սաղաւարտ փըրկութեան ՚ի գլուխ իմ, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամւոյն: Շնորհօք Տն մերոյ Յսի Քսի որում վայե″:

Շապիկն.

Զգեցո՛ տէր ինձ հանդերձ փրկութե, և պատմուճան ուրախութե: Եւ շուրջ պատեա՛ զզգեստուն փրկութե: Շնորհօք:

Փոր Ուրարն.

Զգեցո՛ տէր պարանոցի իմոյ զարդարուն: Եւ սըրբեա՛ զսիրտ իմ յամ աղտեղուէ մեղաց: Շնորհօք:

Գօտին.

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ և մտացս: Եւ ջնջեսցէ ՚ի սոցանէ զխորհուրդս աղտեղիս: Եւ զօրութի շնորհաց քոց յամ ժամ բնակեսցի ՚ի սոսա: Շնոր″:

Բազպանս յաջ ձեռին.

Տուր Տր զօրութի աջոյ ձեռին իմոյ, և լուա՛ զամ աղտեղութիս իմ: Որպէս կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութբ հոգւոյ և մարմնոյ: Շնորհօք:

Բազպան յահեակ ձեռին ·

Տո՛ւր տր զօրութի՛ ձախոյ ձեռին իմոյ, և լուա՛ զիմ աղտեղութիւս իմ: Որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութբ հոգւոյ և մարմնոյ: Շնոր":

Վակասին ·

Օձեցո՛ տէր պարանոցի իմոյ զարդարութի: Եւ սըրբեա՛ զսիրտ իմ յամ աղտեղութէ մեղաց: Շնորհօք:

Նափորտին որ է շուրջառ ·

Տր ողորմութբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ և պարսպեա՛ ընդդէմ ներգործութե չարին: Զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ: Շնորհօք:

Յետ զգեստաւորելոյ սրբազան զգեստուքն ասէ ·

Ցնծասցէ անձն իմ ի տր զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութե և պատմուճան ուրախութե · իբրև փեսայի եդ ինձ պսակ · և որպ զհարսն զարդու զարդարեաց զիս: Շնորհօք:

Թաշկինակին ·

Սրբեա՛ տէր զձեռս իմ յամ աղտեղութէ մեղաց: Շնորհօք տն մերոյ յի քի:

Եւ յետոյ եկեսցեն առաջի դրյ սեղանոյն · Եւ քահանայն լուասցէ զձեռս ասելով · Սաղմոս · իե · կց ·

Լուացից սրբութբ զձե":

Սարկաւագն փոխ·

Դատ արա՛ ինձ տէր զի ես յանմեղութ":

Քահանայն ·

Եւ մտ սրբուհւոյ տծա":

Սարկաւագն ·

Սէ զտծածինն և զամենայն դրս բարե":

Քահանայն ·

Ընկա՛լ տր զաղաչանս մեր":

Խոստովանիմ առաջի այ և սրբուհւոյ տծածնին · և առաջի ամ դրց · և առաջի ձեր հարք և եղբարք զամ մեղս զորս գործեալ եմ · Քանզի մեղայ խորհրդով բանիւ, և գործով · Եւ ամ

Դ

ած՟ մեղօք զոր գործեն մար
դիկք։ Մեղայ, մեղայ։
Աղաչեմ զձեզ խնդրե-
ցէք վ՟ն իմ յա՟յ զթողութի՟։

Պատասխանեսցեն որք մերձն են․

Ողորմեսցի քեզ ած՟ հզօրն
և թողութի՟ շնորհեսցէ
ամ՟ յանցանաց քոց, ան-
ցելոցն և այժմուս․ և յա-
ռաջակայէն փրկեսցէ և
հաստատեսցէ յա՟մ գործս
բարիս։ Եւ հանգուսցէ
զքեզ ՚ի հանդերձեալ
կեանսն․ Ամէն։

Պատասխանեսցէ և ինքն․

Ազատեսցէ և զձեզ մար
դասէրն ած՟, և թողցէ
զա՟մ յանցանս ձեր․ տացէ
ժամանակ ապաշխարելոյ
և գործելոյ զբարիս․ ու-
ղղեսցէ և զառաջիկայ կեա-
նս ձեր շնորհօք սուրբ
հոգւոյն հզօրն և ողոր-
մածն և նմա փառք յա-
ւիտեանս․ ամէն։

Ա

Դպիր․

Յիշեսջի՛ր զմեզ առաջի անմահ գառինն ա՟յ․

Քահանայն․

Յիշեալ լիջիք Առաջի
անմահ Գառինն ա՟յ։

Դպիրքն․ Սաղմոս․ ղթ․ փոխ․

Աղաղակեցէք առ տէր ա՟մ երկիր ծա՟․

Սարկաւագն Քարոզէ․

Մի՟ եկեղեցեաւս աղաչեսցուք զտէր․

Քահանայն․

՚Ի մէջ տաճարիս և առաջի
ած՟ընկալ և պայծառացե՟լ
սբ՟ նշանացս և սբ՟ սեղանոյս
խոնարհեալ երկիւղիւ եր
կիրպագանեմք սբ՟ և զհրա
շալի և զյաղթօղ զյ՟րութի՟դ
քո փառաւորեմք, և քեզ
մատուցանեմք զօրհնութի՟
և զփառս ընդ հօր և ընդ
հոգւոյդ սբ՟յ այժմ և՟։

Քահանայն ասացէ սաղմոս․ խէ․ կցորդ․
Եւ ելցէ ՚ի խորանն․

Մտից առաջի սեղանոյ։

Սարկաւագն փոխ․

Դատ արա ինձ ած՟ և իրաւ արա ինձ՟․

Սարկաւագն քարոզէ․

Եւ ևս խաղաղութեան զտէր աղա՟․

Օրհ

Օրհնեսցուք զհայր տն մերոյ յսի քսի որ արժանի արար զմեզ կալ ՚ի տեղւոջս փառաբանութե՟ և երգել զերգս հոգևորս ամենա"։

Քահանայն։

՚Ի յարկի սրբութե՟ և ՚ի տեղւոջս փառաբանութե՟ · հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս, առաջի ածընկալ և պայծառացեալ սբ նշանացս և սբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկրպագանեմք · զսբ և զհրաշալի և զյաղթող զածութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք · և քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութի և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սբ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · Ամէն։

Իսկ եթէ եպիսկոպոս լինիցի խորհրդածուն՝ ածցէ ՚ի վր լանջացն զպատմուճան կամ եմիփորոնն։ Եւ մատուցեալ առ ընծայաբան սեղանոյն։ Եւ ՚ի ծունկս անկեալ յորդահոս արտասուօք լուռ և անմռունչ ասասցէ զաղօթս առ սուրբ հոգին տնօրինիչ գործոյն։

Գրիգորի Նարեկացւոյն։

ԱՄԵՆԱկալ բարերար մարդասէր ած բոլորից, յօրինող երևութից և աներևութից, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հզօր հոգի, աղաչեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութե յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։

Մատչիմք մեծաւ դողութե՝ սաստիկ երկիւղիւ մատուցանել · նախ զբանականս զայս պատարագ՝ քում անզննելի զօրութեանդ, իբր

Զ

իբր աթոռակցի փառակ-
ցի և արարչակցի հայրե-
նի անկապուտ պատուոյդ,
և քննողի ծածկութեան
խորոց խորհրդոց ամենա-
կատար կամաց հօրդ էմմա-
նուէլի՝ զքեզ առաքչի,
փրկչի և կենդանատուի և
արարչի ամի: Ի ձեռն քո
ծանուցաւ մեզ երրեակ
անձնաւորութիւն միա-
նական ածութեդ, յորոց
մի և դու ճանաչիս անհաս:
Որ և ի ձեռն քո ա-
ռաջինքն նահապետական
տոհմին շառաւիղք՝ տե-
սանօղք անուանակոչեալք,
զանցեալսն և զգալոցսն,
զեղեալսն և զոչ գոյացեալ-
սն, անըստուերաբար բար
բառով բանի վերապատ-
մեցին:
Հոգի այ քարոզեալ ըզ-
քեզ մովսէսի, որ ի գը-
նալն քո ի վերայ ջրոցն՝
անպարագիր զօրութիւն,
ահեղ շրջարկութբ տածո-
ղականաւ՝ թևապարփակ
պաշտպանողօրէն գթասի-
րեալ ի ծնունդս նորոգս՝
զաւազանին խորհուրդ-
ծանուցեր:
Որ կերպարան օրինակու-
թեան՝ նախ քան զկատա-
ցանել զայծդ մածուած
վերջնում վարագուրդ՝
յօրինեցեր կարօղ տիրա-
պէս զբովանդակ բնութիս
ամենից բնաւից բոլորից
գոյից ամ էից՝ յանէից:
Որ և ստեղծանին ինո-
րոգուի յարուե ամ եղէլ
քրս աւ ի քէն՝ յայնմ
ժամանակի, որ է օր վեր-
ջին՝ այսմ կենցաղի, և օր
առաջին՝ երկրին կենդա-
նեաց: Որեզ հնազանդե-
ցաւ միութբ կամացն՝ այ
հօրն իւրում, ազգակիցն
քո՝ էակիցն հօր՝ անդրա-
նիկն

նիկն որդի․ մեռելս կեր-
պիւ ընդ քեզ աւետարա-
նեաց Ճշմարիտ ած՝ հա-
ւատար և համագոյ հօր
իւր հզօրի․ և զառ ՚ի քեզ
հայհոյութիւնն անքաւե-
լի քարոզեաց, և իբր
զածամարտիցն զքո հես-
տեղցն՝ չարաբանական
բերանս կարկեաց, և
զնուրն շնորհեաց՝ արդարն
և անարատն՝ դտիչն ամի․
որ վասն մեղաց մերոց մատ
նեցաւ, և յարեաւ վասն
զմեզ արդարացուցանելոյ։
Նմա փառք ՚ի ձեռն քո,
և քեզ բարեբանութիւն
ընդ հօր ամենակալի յա-
ւիտեանս յաւիտենից․

Ամէն։





Դարձեալ կրկնեցից ՚ի նոյն կարգ բանի, մինչև փառաւորութիւն վերհայեցողութե լուսոյ՝ հրաշապէս յայտնեսցի։ Աղեաւ աւետարանեալ վերստին կրկին զխաղաղութիւն։

# ԱՂԱՉԵՄՔ

և աղերսեմք
արտասուա-
լից հառաչմամբ յամ անձ-
նէ՝ զփառաւորեալ արար-
չութիւնդ՝ անեղծ և ան-
ըստեղծ անժամանակ հո-
գւոյդ գթածի, որ բարե-
խօսդ ես վասն մեր յան-
մռունչ հեծութեամբ՝ առ
ողորմածդ հայր․ որ զըբան
պահես, և զմեղուցեալսն
մաքրես՝ և տաճարս կայ
մես կենդանի և կեցու-
ցիչ կամաց բարձրելոյդ
հօր։ Որդ՝ ապատեա՛ ընդ
մեզ յամ անմաքուր գոր
ծոցս որ ոչ է հաճոյ քում
բնակութե․ և մի՛ հերջցին
առ ՚ի մէնջ՝ լուսոյդ շնոր-
հաց փայլմունք ՚ի տեսակա
նացս

նացս աչաց իմանալից · մի զի զքեզ ուսայք միայնալ ՚ի մեզ ՚ի ձեռն աղօթից , և ընտիր վարուց խնկելոց:

Եւ քանզի մինդ յերրորդութենէդ պատարագիս , և միւսդ ընդունիս հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ · իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս , և յարդարեսցես զմեզ օթևանս պատուականս քմ սրբաստութեամբ` ՚ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ , տանց պատուոց դաստիարակութ` ընդունիլ զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութ:

Եւ հալեսցի ՚ի հրոյս յայս մանէ դայթակղութիս մեր , ըստ մարդկային կենդանախարոյկ կայծակամբն` ՚ի ձեռն ունելեացն մատուցման · զի յամի քոյդ քարոզեսցի գթութի , որպէս որդւոյդ այ հօր քաղցրութի · որ զանառակ որդին մերձեցոյց ՚ի հայրենի ժառանգութիւնն , և [illegible] յառաջեցոյց յերկնայինն ուրախութին` արդարոցն ՚ի բանութէ :

Այո՛ այո՛ և ես մի եմ ՚ի նոցանէ · և զիս ընկա՛լ ընդ նոսին իբր մարդասիրութե կարօտեալ մեծի շնորհօք քո ապրեալ , զարեամբ քով ստացեալս:

Զի յայսմ ամի յամի ծանիցի քո ածութեդ` ընդ հօր փառաւորեալ համապատուաբար ՚ի մի կամս , և ՚ի մի իշխանութիւն գոյութեան :

՚ի Ձայն ·

Զի քո՛յ է գթութի , և կարողութի , և մարդասիրութի , զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից · Ամէն :

Ա… օրհնեցեալ գոյ առ ընծայարան սեղանոյն։ Ապա որ մատուցանէ նախասարկաւագն զխնկամանն.

Զոր առեալ Քահանայն ասէ ՚ի մաղզմայն ասելով։

Յիշատակ տեառն մերոյ յիսուսի քի։ Որ բազմեալ հանգչէր յան առաքեալս ալթո… . զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան. օրհնեցէք՝ գովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան։

Եւ առեալ զգինին՝ արկանէ խաչանիշ ՚ի սկիհն ասելով։

Յաղագս յիշատակի փրկագործ Տնօրէնութեան տն ոյ եւ փրկչին մերոյ յի քի։ Որ ՚ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք եւ անմահացան. օրհնեցէք՝ գովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան։

Եւ ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ Յօհաննու Ոսկեբերանին։

Տէր ած մեր որ զերկնաւոր հացդ զտրն մեր յն քն զկերակուր ամ աշխարհի առաքեցեր փրկիչ եւ կեցուցիչ եւ բարերար՝ օրհնել եւ սրբել զմեզ. ինքնին դու տէր օրհնեա եւ այժմ զառաջադրութիւնս զայս։ Ընկալ զսա յերկնային քո սեղանդ։ Յիշեա որպէս բարերար եւ մարդասէր զմատուցօղս եւ զնս որոց մատուցանի։ Եւ զմեզ անդատապարտ պահեա ՚ի քահանայագործութեան ածային խորհրդոյ քոյ։ Զի սբ եւ փառաւորեալ է ամենապատիւ մեծվայելչութիւն փառացդ հօր եւ որդւոյ եւ հոգւոյդ սրբոյ այժմ եւ՛՛։

Եւ օրհնեսցէ ասելով. սաղմոս ՂԲ։

Տէր թագա։ Զաստուա։ Ամբարձան։ ՚Ի ձայնէ։ Սքանչելի։ Տան քում։

Եւ խաչակնքեսցէ երիցս ասելով.

Հոգին սուրբ եկեսցէ ՚ի քեզ եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քո։

Եւ արկանէ զխունկն ասելով.

Խունկ մատուցանեմ առաջի քո Քրիստոս բուրումն հոգեւորական։ Ընկալ ՚ի սուրբ յերկնային եւ յիմանալի քո մատուցարանդ ՚ի հոտ անուշից։ Առաքեա առ մեզ փոխարէն զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյդ սրբոյ. եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ այժմ"։

Եւ ապա խնկելով ՚ի մէջ եկեղեցւոյն իջանէ հանդերձ սարկաւագօքն, եւ ելեալ ՚ի վեր երիցս երկրպագեսցէ զսեղանն. Եւ նախասարկաւագին ՚ի մէջ եկեղեցւոյ կալով ձայնեսցէ.

Օրհնեա տէր.

Եւ քահանայն ՚ի ձայն ասասցէ.

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ"։

Բ.

Եւ սկսանին դպիրքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն. Եւ յաւարտին ձայնեսցէ նախասարկաւագն. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք ըն. Օրհնեա տէր.

Եւ քահանայն ասասցէ.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ" Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում.

Սարկաւագն.

Աստուծոյ երկրպագեսցուք.

Դպիրքն.

Առաջի քո տէր.

Եւ քահանայն ասասցէ ՚ի ձայն.

Տէր Աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննելի է. եւ փառքդ անհասանելի։ Որոյ ողորմութիւնդ անչափ է. եւ գթութիւնդ անբաւ։ Դու ըստ առատ մարդասիրութեան քում, հնայեաց ՚ի ժողովուրդս քո՝ եւ ՚ի սաս տաճարս այս սուրբ։ Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւն քո եւ զգթութիւն։ Զի քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւ"։

Եւ

Եւ սկսանին ասել դպիրքն սաղմոս և շարական ըստ պատշաճին ։

Եւ մինչ նոքա երգեն, Քահանայն ասասցէ զաղօթս ։ Ի ծածուկ ։

Տէր Աստուած մեր կեցո՛ զժողովուրդս քո՛ . և օրհնեա՛ զժառանգութիւն քո՛ . զլրումն եկեղեցւոյ քո՛ պահեա՛ . սրբեա՛ զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ ։ Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով . և մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ ։ Զի քո է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւ"։

Խաղաղութիւն ամենեցուն ։

Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն՝ ուսուցեր աղօթել . և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո՛ զխնդրուածս պարգևել խոստացար ։ Դու և այժմ զծառայից քոց զխնդրուածս առ ի յօգուտն կատարեա՛ ։

Շնորհելով մեզ յայսմ յաշխարհիս զգիտութիւն քում ճշմարտութեան ։ Եւ ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգևելով ։ Զի բարերար և մարդասէր ես Աստուած . և քեզ վայել է փառք իշ"։

Եւ ի փառք տալն դպրաց երկիրպագցեն առաջի բեմին ամենեքեան ։

Եւ քահանայն երկիրպագ[illegible] ղանոյն ասասցէ զաղօ[illegible] ի ծածուկ ։

Տէր Աստուած մեր՝ որ կարգեցեր յերկինս զդասս և զզինուորութիւնս հրեշտակաց և հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փառաց քոց ։ Արա՛ այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց . և լինել պաշտօնակից մեզ՝ և փառաբանակից քում բարերարութեանդ ։

Ի Ձայն ։

Զի քո՛ է կարողութիւն , և զօրութիւն , և փառք յաւիտ" ։

Ամէն ։

Եւ

Եւ համբուրեսցեն զսեղանն. և սարկա
ւագունքն գոչեսցեն.

Պրոսխումէ.

Եւ սարկաւագաց մի ոմն բարձրացուցա
նէ զաւետարանն սբ.

Եւ դպիրքն ըստ խորհրդոյ աւուրն եր
գեն զերեքսրբեանն.

Սբ ած սբ և հզօր սբ և անմահ որ խա
չեցար և այլն.

Եւ քահանայն զոյգ սմին ասասցէ.

Պ ծածուկ.

Ած սբ՝ որ ի սբս հան
գուցեալ ես, և երեք սր
բեան ձայնիւ սերովբէք
գովեն զքեզ՝ և քերովբէք
փառաբանեն. և ամ երկ
նային զօրութիւնք՝ քեզ
երկրպագանեն: Որ ի չէ
գոյէ ի գոյ ածեր զամ ա
րարածս. որ արարեր զմար
դն ըստ պատկերի քում
և նմանութե. և ամ շնոր
հիւ քով զնա զարդարե
ցեր. և ուսուցեր խնդրել
զիմաստութի և զգօնութի:
Եւ ոչ անտես արարեր
զմեղուցեալն, այլ եդեր



ի վերայ նր ապաշխարու
թի փրկութե: Որ արժա
նի արարեր զմեզ զնուա
տացեալ և զանարժան ծա
ռայս քո ի ժամուս յայս
միկ, կալ առաջի փառաց
սրբութե սեղանոյ քոյ:
Եւ զօրինաւոր երկրպա
գութի և զփառաբանու
թիւն մատուցանել քեզ:
Դու տր՝ ընկալ ի բերա
նոյ մեղաւորացս զերեք
սրբեան օրհնութիս. և պա
հեա զմեզ քոյին քաղցրու
թեդ. թող մեզ զամ յան
ցանս մեր զկամայ և զակա
մայ: Սրբեա զհոգի զմե
րս՝ և զմարմինս մեր. և
շնորհեա ի սրբութե պաշ
տել զքեզ զամ աւուրս
կենաց մերոց: Բարեխօ
սութբ սրբուհւոյ ածած
նին և ամ սբց քոց՝ որք յա
ւիտենից քեզ բարեհա
ճոյացան: Զի սբ ես տր

ած մեր. և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պա-տիւ այժմ և միշտ և յա՛՛:

Եւ ՚ի կատարել երեք սրբենոյն և աղօ-թիցն՝ սարկաւագն քարոզէ.

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղա՛՛.
Ա՜ խաղաղութեան ամենայն աշ՛՛.

Եւ քահանայն՝ բարձրաձայն ասասցէ զաղօթս ՚ի ծածուկ.

Տէր ած մեր՝ պըւաշխատա-րած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս և ողոր-մեսցիս ըստ մեծի ողորմու-թեան քում: Ողորմութիւն քո առաքեա ՚ի վերայ մեր և ամ ժողովրդեանս՝ որք ակն ունին առ ՚ի քէն ա-ռատ ողորմութեանդ:

Սարկաւագն ձայնեսցէ.
Օրհնեա տէր.

Եւ քահանայն ասասցէ ՚ի ձայն.

Զի ողորմած և մարդա-սէր ես ած. գոլով և քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ այժմ և՛՛:

Գ



Յետ այսորիկ՝ երկրպագէ սեղանոյն քա-հանայն, և եկեալ բազմի յաստիճանն. և սկսանին դպիրքն սաղմոս ըստ խորհրդոյ աւուրն.

Եւ ընթերցցին զգիրս մարգարէականս և զառաքելականս.

Եւ զկնի ալէլուիայ, ըստ ցուցանելոյ ըն-թերցուածոյն. և յաւարտմանն՝

Սարկաւագն ձայնեսցէ.

Օրթի.

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ ՚ի վերայ ժողովրդեանն ասելով.

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.
Եւ ընդ հոգւոյդ քում.
Սարկաւագն.
Երկիւղածութեամբ լուարուք.
Սարկաւագն:
Սրբոյ Աւետարանիս Որ ըստ Մատթէոսի.
Դպիրքն.
Փառք քեզ տէր ած մեր.
Սարկաւագն.
Պրօսխումէ.
Դպիրքն.
Ասէ Աստուած.

Եւ Սարկաւագն ընթերցցի զԱւե-տարանն Սուրբ. Եւ յաւարտմանն՝ ասասցեն Ամենեքեան.

Փառք քեզ տէր ած մեր.

Եւ ապա ասեն զնիկիական դաւանութիւն ՚ի լման.

ա

Հ ԱՒԱՏԱՄՔ
ի մի ա՟ծ հայր ա-
մենակալ, յարա-
րիչն երկնի և երկրի, ե-
րևելեաց և աներևութից։
Եւ ի մի տէր յս՟ քս՟ յոր
դին ա՟յ, ծնեալն յա՟յ հօրէ
միածին. այսինքն յէու-
թենէ հօր։

Ա՟ծ յաստուծոյ՝ լոյս ի
լուսոյ՝ ա՟ծ ճշմարիտ՝ յա՟յ
ճշմարտէ ծնունդ և ոչ
արարած։
Նոյն ինքն ի բնութենէ
հօր որով ա՟մ ինչ եղև յեր
կինս և ի վերայ երկրի,
երևելիք և աներևոյթք։
Որ յաղագս մեր մարդկան
և վ՟ն մերոյ փրկութե՟ ի-
ջեալ յերկնից մարմնա-
ցաւ մարդացաւ ծնաւ
կատարելապէս ի մարիա-
մայ սրբոյ կուսէն հո-
գւովն սրբով։

Որով էառ մարմին հոգի
և միտ. և զա՟մ որ ինչ է ի
մարդ, ճշմարտապէս և ոչ
կարծեօք։
Չարչարեալ խաչեալ թա
ղեալ, յերրորդ աւուր յա
րուցեալ. ելեալ ի յեր-
կինս նովին մարմնովն՝
նստաւ ընդ աջմէ հօր։
Գալոց է նովին մարմնովն
և փառօք հօր, ի դատել
զկենդանիս և զմեռեալս։
Որոյ թագաւորութեանն
ոչ գոյ վախճան։
Հաւատամք և ի սուրբ
հոգին յանեղն և ի կատա-
րեալն։
Որ խօսեցաւ յօրէնս և ի
մարգարէս և յաւետարանս։
Որ էջն ի յորդանան քա-
րոզեաց զառաքեալսն և
բնակեցաւ ի սուրբսն։
Հաւատամք և ի մի միայն
ընդհանրական և առաքե-
լական եկեղեցի։

Ի

'Ի մի մկրտութի, յապաշ-խարութի, 'ի քաւութի, և 'ի թողութի մեղաց:
'Ի յարութիւն մեռելոց:
'Ի դատաստանն յաւիտե-նից: Հոգւոց և մարմնոց յարքայութին երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս:
Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդին. կամ էր երբեմն յորժամ ոչ էր սբ հոգին. կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութէ ասեն լինել զոր-դին այ և կամ զսբ հոգին. և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և ա-ռաքելական սբ եկեղեցի:

Լուսաւորչէն ասացեալ.

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկրպագանելով սբյ եր-րորդութեն և մի ածութեն հօր և որդւոյ և հոգւոյն սբյ. այժմ և":



Սարկաւագն քարոզէ 'ի ձայն.
Եւ ևս խաղաղութեան զտր".
Դպիրքն՝ տէր ողորմեա.
Եւ ևս հաւատով աղաչես".
Մինչ նոքա երգեն, քահանայն ասասցէ զաղօթս 'ի ծածուկ.

Տէր մեր և փրկիչ յս քս որ մեծդ ես ողորմութբ, և առատ պարգևօք բարե-րարութե քո: Որ դու քոյին կամաւ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չար-չարանաց խաչի և մահու յաղագս մեղաց մերոց: Եւ պարգևեցեր առա-տապէս զպարգևս հո-գւոյդ սրբոյ երանելի ա-ռաքելոցն:
Հաղորդս արա և զմեզ տր աղաչեմք զքեզ ածային պարգևացդ. թողութե մեղաց՝ և ընդունելութե հոգւոյդ սրբոյ:

'Ի Ձայն.

Որպ զի արժանաւորք եղե-ցուք գոհութբ փառաւորել զքեզ ընդ հօր և սբ հո":

Իսա

Խաղաղութիւն ամենեցուն.

Խաղաղութե̃ քով Քս̃ փրկիչ մեր՝ որ ՚ի վեր ես քան զամ̃ միտս եւ զբանս: Ամրացո զմեզ եւ աներկիւղ պահեա յամ̃ չարէ. հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո՝ որք հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ երկրպագանեն. վն̃ զի ամենասուրբ երրորդութեանդ վայել է փառք իշխա″:

Օրհնեալ տր̃ մեր յս̃ քս̃ Ամէն:

Սարկաւագն.

Օրհնեա տէր.

Քահանայն խաչակնքէ ՚ի վերայ ժողովրդեանն ասելով ՚ի ձայն.

Տր̃ ամ̃ օրհնեսցէ զա″:

Յետ այսորիկ՝ եթէ եպիսկոպոս իցէ ՚ի բաց հանցէ զեմիփորոնն.

Սարկաւագն.

Սաղմոս ասացէք տեառն այ̃ մե″.

Դպիրքն ասեն զսրբասացութիւնն ըստ խորհրդոյ աւուրն.

Սարկաւագն.

Մի՛ ոք յերախայից.

Դպիրքն.

Մարմին տէրունական.

Եւ գան խնկարկելով ՚ի սուրբ խորհուրդն.

Սարկաւագն.

Յարեաւ եհար զկո″.

Դպիրքն.

Եւ ցնծայ նա որպէս հս″.

Եւ ապա եղանակեսցեն.

Որք զքերովբէից.

Ապա Սարկաւագն վերաբերիցի սրբազան հացն՝ եւ անմահութեան բաժակն ՚ի սր̃ սեղանն. Եւ մինչ նոքա երգեն՝ քահանայն խոնարհեսցի առաջի սր̃յ սեղանոյն եւ խորհրդաբար աղօթեսցէ ՚ի ծածուկ.

Ո՛չ ոք արժանի է յմբռնելոցս մարմնաւոր ախտիւք եւ ցանկութ̃ մատչել ՚ի սեղան քո. կամ՝ սպասաւորել արքունական փառաց քոց: Քանզի պաշտել զքեզ մեծ եւ ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է: Սակայն վն̃ անչափ բարերարութե̃ քո՝ անպարագրելի բանդ հօր՝ եղեր մարդ՝ եւ քահանայապետ մեր երեւեցար: Եւ իբր տր̃ ամ̃ցուն այսմ սպասաւորութե̃՝ եւ անարիւն զենման՝ զքահանայութիւն

աւան

աւանդեցեր մեզ ։
Կ՛ո զի դու ես տէր ած
մեր որ տիրես երկնաւո֊
րաց և երկրաւորաց։ Որ ՚ի
վե՛ր քերովբէական աթոռոյ
բազմիս․ սերովբէից տր և
թագաւոր իշխես։ Որ միայն
սբ ես և ՚ի սբս հանգուցեալ։
Աղաչեմ զքեզ միայն բա
րերար և հեշտալսելի․ նայ֊
եաց յիս ՚ի մեղուցեալ և
յանպիտան ծառայս քո։
Եւ սրբեա զհոգի և զսիրտ
միոյ իմ յամ պղծութե֊
ներէն։ Եւ բաւականացո
զիս զօրութբ սբ հոգւոյդ.
որ զգեցեալ եմ զքահա֊
նայական շնորհ, կալ ա֊
ռաջի սրբոյ սեղանոյս և
քահանայագործել զքո ա֊
նարատ մարմինդ և զպատ
ուական արիւնդ։ Քեզ
խոնարհեցուցեալ զպարա֊
նոցս իմ, մաղթեմ. մի դար
ձուցաներ զերեսս քո յի

նէն․ և մի մերժեր զիս ՚ի
ծառայից քոց։ Այլ ար
ժանի արա մատուցանել
քեզ զընծայս զայս յինէն
՚ի մեղուցեալ և յանար֊
ժան ծառայէս քումմէ։
Կ՛ո զի դու ես որ մատու
ցանես՝ և մատչիս՝ և ընդու
նիս, և տաս քս ած մեր։
Եւ քեզ փառս մատուցա
նեմք հանդերձ անսկզբ
բն քո հարբդ և ամե
նասուրբ և բարե
րար հոգւովդ․
այժմ և միշտ
և յաւէ՛։

Եւ ընծայքն վերաբերին ՚ի սեղանն։

Եւ քահանայն խնկեսցէ և լուասցէ զձ
մատունսն ասելով․

Լուացից սրբութբ զձեռս՛։

Սարկաւագն.

Եւ ես խաղաղութե զտր աղա՛.

Եւ ես հաւատով և սրբու՛.

Մինչ նոքա քարոզեն․ Քահանայն բաց
կատարած աղօթեսցէ ՚ի ծածուկ.

ՏԷՐ ԱԾ. ԶՕ-
րութեանց և
արարիչ ամն լի-
նելութեանց։
Որ յանէութէ
զբնաւս ՚ի ցուցակութի
ածեալ գոյացուցեր։ Որ
և զմերս զհողեղէն բնու-
թիւնս պատուեալ մարդա-
սիրապէս։ Այսպիսի ա-
հաւոր և անպատում խոր-
հրդոյ կարգեցեր սպասա-
ւորս։ Դու տէր՝ որում
պատարագեմք զպատարա-
գս ընկալ առ ՚ի մէնջ
զառաջադրութիս զայս,
և աւարտեա զսա ՚ի խոր-
հրդականութիւն մարմ-
նոյ և արեան միածնի քոյ.
դեղ թողութեան մեղաց
պարգևեա ճաշակողացս
զհացս զայս և
զբաժակս։

՚ի Ձայն.

Շնորհօք և մարդասի-
րութբ տն մերոյ և փրկ-
չին յսի քսի. ընդ որում
քեզ հօր միանգամայն և
հոգւոյդ սրբոյ վայելէ
փառք իշխա"։

Խաղաղութի ամենեցուն։

Դպր. Եւ ընդ հոգւոյդ քում.

Սրկ. Աստուծոյ երկիրպագեսցուք.

Դպր. Առաջի քո տէր.

Սրկ. Ողջոյն տուք միմեանց ՚ի համ".

Դպր. Քս ՚ի մէջ մեր յայտ".

Եւ համբուրեն զսեղանն և զմիմեանս. և սարկաւագն ձայնեսցէ.

Ահիւ կացցուք երկիւղիւ կաց".

Դպր. Առ քեզ աստուած.

Սրկ. Պատարագ քս մատ".

Դպր. Ողորմութիւն և խաղաղու".

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ ՚ի Ձյն.

Շնորհք, սէր և աձային
սրբարար զօրութի՛ն հօր
և որդւոյ և հոգւոյն սբյ։
Եղիցի ընդ ձեզ ընդ
ամենեսեան։

Դպ. Ամէն և ընդ հոգւոյդ քում.

Սրկ. Օրհնեա զօրհնեա տէր.

Դպ. Ունիմք առ քեզ տէր ամենակալ.

Սրկ. Եւ գոհացարուք.

Դպ. Արժան և իրաւ.

Մինչ նոքա երգեն Քահանայն ձեռնամած աղօթեսցէ ի ծածուկ.

Արժան է ստուգապէս և իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկիր պագանելով փառաւորել զքեզ Հայր ամենակալ։

Որ զքոյին անզննելի և արարչակից բանիւդ զանիծիցն բարձեր զխրճիմն։

Նոր ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեփհականեաց ըզհաւատացեալս ի քեզ։

Եւ զննելի բնութեամբ ըստ ի կուսէն տընտեսութեան՝ հաճեցաւ բընակել ի մեզ։ Եւ նորագործ ստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար։

Վասն զի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք ի փայլակնացայտ և յանմատոյց լուսոյ ածութեանդ։

Եղեալ այդպիսիդ մարդ՝ յաղագս մերոյ փրկութեան շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս։

Ի Ձայն.

Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս . և համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին և ասել։

Դպիրքն.

Սբ սբ սբ տէր զօրութեանց լի են երկինք և երկիր փառօք քո օրհնու".

Մինչ

Ի

Մինչ նոքա երգեն, Քահանայն բազ-
կատարած ասասցէ ՚ի ծածուկ.

ՍԲ՝ սբ ես ճշմարտա-
պէս եւ ամենասբ. եւ ո՞վ
ոք պանծասցի բովանդա-
կել բանիւ զքո ՚ի մեզ
զանբաւ բարերարութեն
զեղմունս: Որ եւ անդէն
իսկ ՚ի նախնումն զան-
կեալն ընդ մեղօք զանա-
զան եղանակօք՝ խնամեալ
սփոփեցեր: Մարգարէ-
իւք, օրինացն տուչութբ,
քահանայութեամբ, եւ
ըստուերակերպ երինջուցն
մատուցմամբ:

Իսկ ՚ի վախճան աւուրցս
այսոցիկ՝ զբովանդակ իսկ
զպարտեաց մերոց խզեալ
զդատակնիք: Ետուր մեզ
զորդին քո միածին, պար-
տապան եւ պարտս. զենու-
մն եւ օծեալ. գառն եւ
երկնաւոր հաց. քահա-
նայապետ եւ պատարագ:

Գ.

Վասն զի ինքն է բաշ-
խօղ. եւ նոյն ինքն բաշխի
՚ի միջի մերում միշտ ան-
ծախապէս:

Վասն զի եղեալ հաւաս-
տեաւ եւ առանց ցնորից
մարդ. եւ անշփոթ միաւո-
րութեամբ մարմնացեալ
յԱծածնէն եւ ՚ի սբ կու-
սէն մարիամայ:

Ճանապարհորդեաց ընդ
ամ կիրս մարդկային կեն-
ցաղոյս առանց մեղաց:

Եւ յաշխարհակեցոյցն՝ եւ
առիթն փրկութեան մե-
րոյ՝ եկեալ կամաւ ՚ի
խաչ:

Առեալ զհացն՝ ՚ի սուրբ
յԱծային՝ յանմահ՝ յանա-
րատ՝ եւ յարարչագործ՝ ՚ի
ձեռս իւր. օրհնեաց՝ գո-
հացաւ՝ եբեկ՝ եւ ետ իւ-
րոց ընտրեալ սուրբ եւ
բազմեալ աշակեր-
տացն ասելով:

Առէք

Ի Ձայն.

**Առէ՛ք Կերէ՛ք Այս է**
**ՄԱՐՄԻՆ ԻՄ**
որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քաւութի֊ և ի թողութիւն մեղաց:

Ի ծածուկ.

Նոյնպէս և զբաժակն առեալ. Օրհնեաց՝ գոհացաւ՝ էարբ՝ և ետ իւրոց ընտրեալ սբ և բազմեալ աշակերտացն ասելով:

Ի Ձայն.

**Արբէ՛ք ի սմանէ Ամենեքեան. Այս է**
**ԱՐԻՒՆ ԻՄ**
նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց:

Ի ծածուկ.

Եւ զայն միշտ իւր յիշատակ առնել, պատուիրեալ աւանդեաց մեզ բարերար

Ի

խա

որդւոյ քո միածնին: Եւ իջեալ ի ստորին վայրս մահու մարմնովն՝ զոր ի մեր մէս ընկալաւ յաղագակցութէ: Եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս: Զքեզ միայն ծանոյց մեզ ճշմարիտ ած՝ զածդ կենդանեաց և մեռելոց:

Եւ առնու զընծայսն ի ձեռն
Եւ ասացէ ի ծածուկ.

Եւ արդ մեք տէր՝ ըստ այսմ հրամանատրութե յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ:
Յիշեմք զդորա որ վն մեր զփրկագործ չարչարանսն:
Զկենսատու խաչելութի֊ն:
Զերեքօրեայ թաղումն:
Զերանելի յարութի֊ն:
Զածային համբարձումն:
Զնստելն ընդ աջմէ քո հայր:
Զահաւոր և զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք:

Եւ զխնկայն սակս ինչ բարձրացու-
ցեալ մատուսցէ առ հայր ·
Եւ դիցէ 'ի վերայ սրբոյ սեղանոյն
ասելով 'ի Ձայն ·

Եւ զքոյս՝ 'ի քոյոց՝ քեզ մատուցանեմք ըստ ամի և յաղագս ամենեցուն:

Դպ Յամի օրհնեալ ես տէր ·

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն բազկատարած ասասցէ 'ի ծածուկ ·

Զքեզ արդարև տր ած մեր զովեմք · և զքեզն զոհանամք հանապազ: Որ զանց արարեր զմերով անարժանութբս · այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Ոչ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր եմք և միշտ ունայն գտանիմք հանապազ: Այլ 'ի քո բազմագեղ ներողութեանցդ ապաւինեալ համարձակիմք մերձենալ 'ի սպասաւորութի մարմնոյ և արեան միածնի քոյ տն մերոյ և փրկչին յսի քսի · որում վայելէ փառք իշ'':

'ի Ձայն ·

Խաղաղութի ամենեցուն:

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում ·

Սրկ Աստուծոյ երկիրպագեսցուք ·

Դպ Առաջի քո տէր ·

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն խոնարհեալ երկիրպագցէ սեղանոյն և ասասցէ ·

Երկիրպագանեմք՝ և աղաչեմք՝ և խնդրեմք 'ի քէն բարերար ած: Առաքեա 'ի մեզ և յառաջի եդեալ ընծայս այս՝ զմշտնջենաւորակից քո և զէակից սբ հոգիդ:

Դպ Որդի այ որ պատարագ''.

Եւ կացեալ սարկաւագն առ ընթեր քահանային երկիւղիւ և դողութբ մեծաւ ·
Եւ ասասցէ 'ի ցած Ամէն օրհնեա տր ·
Եւ քահանայն խաչակնքեսցէ զխնկայն ասելով 'ի ծածուկ ·

ՈՐՈՎ Զ հացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես տն մերոյ և փրկչին յսի քսի:

Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս ա-
րարցես տն մերոյ և փրկ-
չին յսի քսի:

Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս ա-
րարցես տն մերոյ և փրկ-
չին յսի քսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս ա-
րարցես տն մերոյ և փրկ-
չին յսի քսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս ա-
րարցես տն մերոյ և փրկ-
չին յսի քսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս ա-
րարցես տն մերոյ և փրկ-
չին յսի քսի:

Որով զհացս և զգինիս օրհնեալ մարմին և արիւն ճշմարտապէս արարցես տն մերոյ և փրկչին յսի քսի փոխարկելով հոգւովդ քով սրբով:

Երիցս կրկնեսցէ:



Ապա ասասցէ ի Ձայն.

Որպ զի եղիցի սա ամենուն մեզ մերձեցելոցս՝ յան-
դատապարտութի ի քա-
ւութի և ի թողութի մեղաց:

Եւ քահանայն այսուհետև ոչ բարձրագոյն քան զընծայման զձեռան իւր տարածեալ, այլ խոնարհագոյն: Եւ զձայն ի նոյն յառեալ աղօթեսցէ ի ծածուկ.

Սովաւ շնորհեա զսէր ըզ հաստատուն և զըղձալի ըզ խաղաղութի ամ աշխարհի: Սբյ եկեղեցւոյ և ամ ուղղափառ եպիսկոպոսաց: Քահանայից: Սարկաւագաց: Թագաւորաց: Աշխարհի: Իշխանաց: Ժողովրդոց: Ճանապարհորդելոց: Նաւելոց: Կապելոց: Վտանգելոց: Աշխատելոց: Եւ որք ի պատերազմունս բարբարոսաց: Սովաւ և օդոց շնորհեա ըզ բարեխառնութի. և անդոց զպտղաբերութի: Եւ ախտացելոց ի պէսպէս ցաւս՝

փու

փութապէս զաւուրջուն :
Սուրբ հանգո զամենե֊
սեան յառաջագոյն ՚ի քո
զննջեցեալսն :
Զնախահարս :
Զհայրապետս :
Զմարգարէս :
Զառաքեալս :
Զվկայեալս :
Զեպիսկոպոսունս :
Զերիցունս :
Զսարկաւագունս :
Եւ զբնաւ ուխտ եկեղե֊
ցւոյ քոյ սրբոյ : Եւ զամե֊
նեսեան յաշխարհական
կարգէ զարս և զկանայս
հաւատով վախճանեալս :

՚Ի Ձայն .

Ընդ որս և մեզ այց ա֊
րասցես բարերար Աստուած
աղաչեմք :

Գոհէին .

Յիշեա Տէր և ողորմեա .

Քահանայն .

Աստուածածնին սրբոյ կուսին
մարիամու : Եւ յովհան֊
նու մկրտչին : Ստեփան֊
նոսի նախավկային :
Եւ ամենայն սրբոց եղիցի յի֊
շատակ ՚ի սուրբ պատարագս
աղաչեմք :

Գոհէին .

Յիշեա Տէր և ողորմեա .

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն
ձեռնամած ասասցէ .

Առաքելոց սրբոց մարգարէից .

Եւ մինչ նոքա երգեն զքարոզս քահանայն
ասասցէ զաղօթս զի ՚ի միասին աւար֊
տեսցեն .

Յիշեա Տէր և ողորմեա,
և օրհնեա զսուրբ կաթուղի֊
կէ և զառաքելական եկե֊
ղեցի քո : Զոր փրկեցեր
պատուական արեամբ միած֊
նի քոյ . և ազատեցեր խա֊
չիւ սրբով : Շնորհեա սմա
զանշարժ զխաղաղութիւն :
Յիշեա Տէր և ողորմեա,
և օրհնեա զամենայն ուղղա֊
փառ եպիսկոպոսունս՝ որք
ուղիղ վարդապետութեամբ հա
մառօտեն ՚ի մեզ զբանն
ճշմարտութեան :

'Ի Ձայն.

Եւ առաւել զերախտաւորասպետսն մեր, և զպատուական հայրապետն մեր Հայոց զՏէր (այս անուն) շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութե՛:

Եւ դարձեալ սարկաւագն գայ 'ի տեղի իւր. Եւ քարոզեսցէ բարձր.

Գոհութիւն և փառաբանութիւն մա՛.

Մինչ նոքա քարոզեն՝ Քահանայն ասասցէ զաղօթս 'Ի ծածուկ.

Յիշեա Տէր և ողորմեա, և օրհնեա զքո առաջի կացեալ ժողովուրդս՝ և զզպատարագիս մատուցօղս: Եւ պարգևեա սոցա զզպիտոյսն և զօգտակարսն: Յիշեա Տէր և ողորմեա, և օրհնեա զուխտաւորս և զպտղաբերիչս Եկեղեցւոյ քում սրբոյ. և որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ. Եւ հատո նոցա զպարտս նոցա ըստ ընդաբոյս առատութե՛ քում հարիւրապատիկ աստ և 'ի հանդերձելումն: Յիշեա Տէր և ողորմեա, և գթա 'ի հոգիս հանգուցելոցն: Հանգո՛ զնոսա և լուսաւորեա՝ և դասաւորեա ընդ Սուրբս քո յարքայութեանդ երկնից. և արժանի արա ողորմութե՛ քում:

Յիշեա Տէր և զհոգի ծառայիս քոյ. (այս անուն). և ողորմեա նմա ըստ մեծի ողորմութեան քում, և հանգո՛ այցելութեամբ 'ի լոյս երեսաց քոց:

Եւ թէ կենդանի է՝ Փրկեա զնա յամ որոգայթից հոգւոյ և մարմնոյ: Յիշեա Տէր և զայնոսիկ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս, զկենդանիս և զհանգուցելս. և կառավարեա զկամս հայցմանց նոցա և զմերս, ընդ

ուղ

ուղղորդն և որ լինէ փրկութեամբ:

Եւ վարձատրեա՛ բոլորեցունց զանանց և զերանելի բարութիւնդ: Եւ զըտեալ զխորհուրդս մեր տաճարայցա՛ յընդունակութիւն մարմնոյ և արեան միածնի քոյ տն մերոյ և փրկչին յի քի· ընդ որում քեզ հօր ամենակալի հանդերձ կենդանարար և ազատիչ սբ հոգւովդ· վայելէ փառք իշ":

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ ի Ձայն·

Եւ եղիցի ողորմութիւն մեծին այ և փրկչիս մերոյ յի քի, ընդ ձեզ ընդ ամենեսեանդ:

Դպ Ամէն և ընդ հոգւոյդ քում·

Սրկ Ամէն Եւս խաղաղութեան զտր ա"·

Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք եւս առա":

Վս մատուցեալ սբ և":

Մինչ սարկաւագն քարոզէ՝ Քահանայն ասասցէ ի ծածուկ·

Տ՛ր ճշմարտութե՛ և հայր ողորմութե՛ գոհանամք ըզքէն: Որ ի վեր քան զերանելի նահապետացն, ըզմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զբնութի՛: Վս զի նոցա ած կոչեցար· իսկ մեզ՝ հայր հաճեցար անուանիլ գթալով: Եւ այժմ տր աղաչեմք զքեզ, զյայտնի աւ ի քէն զնորոգ և զպատուական անուանադրութեանս շնորհ: Օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո՛ ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ:

Ի Ձայն·

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր կարդալ զքեզ երկնաւոր հայր, երգել և ասել:

Եւ Դպիրքն Բարձրաձայն Աղաղակեսցեն.

Հայր մեր որ յերկինս ես մ՛ր. եղէ՛.

Մինչ նոքա երգեն՝ Քահանայն աղօթեսցէ ի ծածուկ.

Տէ՛ր տէրանց Աստուած աստուածոց. Թագաւոր յաւիտենականաց. արարիչ ամենայն արարածոց, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մի՛ տար զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ եւ ապրեցո՛ ի փորձութենէ:

Ի Ձայն.

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում.

Սարկաւագն.

Աստուծոյ երկրպագեսցուք.

Դպիրքն.

Առաջի քո տէր.

Սարկաւագն.

Օրհնեա՛ տէր.

Քահանայն խոնարհեսցի եւ ամենայն ժողովուրդն չոքեսցի ի ծունկս.

Եւ Քահանայն աղօթեսցէ ի ծածուկ.

Որ աղբիւրդ ես կենաց եւ բղխումն ողորմութեան Հոգիդ Աստուած: Ողորմեա՛ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկրպագանեն Աստուածութեան քում: Պահեա՛ ըզսոսա ամբողջս, տպաւորեա՛ յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի: Ի ժառանգութիւն եւ ի վիճակ հանդերձելոց բարեաց:

Ի Ձայն.

Քրիստոսիւ Յիսուսիւ տէրամբ մերով. ընդ որում քեզ հոգւոյդ սրբոյ եւ Հօր ամենակալի վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ՛՛:

Եւ քահանայն առցէ զսուրբ հացն ի ձեռն. Եւ սարկաւագն ձայնեսցէ բարձր.

Պռօսխումէ.

Եւ

Եւ քահանայն բարձրացուցանէ աչնէրև ամենայն ժողովրդեանն ։

Եւ ասասցէ ՚ի Ձայն ։

# ՚Ի Սրբութիւն Սրբոց ։

Դպիրքն Բարձր Ձայնիւ ։

Միայն սուրբ, միայն տէր, յիսուս քրիստոս ։

Քահանայն ։

## Օրհնեալ Հայր Սուրբ Աստուած Ճշմարիտ ։

Դպիրքն . Ամէն ։

Քահանայն ։

## Օրհնեալ Որդի Սուրբ Աստուած Ճշմարիտ ։

Դպիրքն . Ամէն ։

Քահանայն ։

## Օրհնեալ Հոգի Սուրբ Աստուած Ճշմարիտ ։

Դպիրքն . Ամէն ։

Քահանայն ։

## Օրհնութիւն Եւ փառք Հօր Եւ Որդւոյ Եւ Հոգւոյն Սրբոյ, Այժմ ։

Դպիրքն . Ամէն ։

## Հայր Սուրբ Որդի Սուրբ Հոգի Սուրբ Օրհնեալ ։

Դ

Եւ մինչ նոքա երգեն զայս, Քահանայն խոնարհեսցի և աղօթեսցէ ՚ի ծածուկ ։

Նայեաց տէր մեր յիսուս քրիստոս յերկնից ՚ի սրբութենէ քումմէ, և յաթոռոյ փառաց թագաւորութեան քո . եկ ՚ի սրբել և ՚ի կեցուցանել զմեզ ։ Որ ընդ հօր նստիս և աստ պատարագիս ։ Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ և ՚ի պատուական արենէ . և ՚ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս ։

Եւ զայս ասացեալ երկրպագեսցէ և համբուրեսցէ զսեղանն ։

Եւ առեալ զսուրբ Մարմինն ողջ խառնեսցէ յանապական Արիւնն և ասասցէ ։

Տէր Աստուած մեր որ կոչեցեր զմեզ յանուն միածնի որդւոյ քո քրիստոնեայս . և շնորհեցեր մեզ մկրտութ՟ հոգևոր աւազանաւն ՚ի թողութ՟ մեղաց . և արժանի

նի արարեր զմեզ հաղոր-
դել սուրբ մարմնոյ և արեան
միածնի քո։ Եւ այժմ
աղաչեմք զքեզ տէր՝ արա
զմեզ արժանի ընդունել
զսուրբ խորհուրդս զայս մեզ
ի մեղաց թողութիւն։
Եւ գոհութեամբ փառաւորել
զքեզ ընդ Որդւոյ և սուրբ
Հոգւոյդ այժմ և։

Եւ բարձրացուսցէ անկերև ծածկոցը-
դեանն և ասասցէ ի Ձայն.

Ի սուրբ ի սուրբ պատուական
մարմնոյ և յարենէ տեառն
մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի։
Ճաշակեսցուք սրբութեամբ
որ իջեալ ի յերկնից բաշ-
խի ի միջի մերում։
Սա է Կեանք, Յոյս,
Յարութիւն, Քաւութիւն,
Եւ թողութիւն մեղաց։
Սաղմոս ասացէք տեառն այ մե-
րում։ Սաղմոս ասացէք երկ-
նաւոր թագաւորիս մե-
րում անմահի, որ նստի ի
կառս քերովբէականս։
Ե



Սարկաւագն ձայնեսցէ.

Սաղմոս ասացէք տեառն այ մերում.

Եւ Դպիրքն Եղանակեսցեն.

Քրիստոս պատարագեալ բաշխի ի մէջ.

Մինչ նոքա երգեն, Քահանայն առցէ
զՄարմինն ի ձեռն. Եւ համբուրեսցէ
Արտասուօք Ասելով.

Զոր Օրհնութիւն, կամ
զոր Գոհութիւն ի վերայ
Հացիս Եւ բաժակիս
ասասցուք։
Այլ Յիսուս զքեզ միայն օրհ-
նեմք հանդերձ Հարբ և
ամենասուրբ Հոգւովդ այ։

Դարձեալ ասասցէ.

Խոստովանիմ և հաւա-
տամ, զի դու ես քրիստոս
որդի այ, որ բարձեր զմեղս
աշխարհի։

Եւ բեկեալ արկցէ ի բաժակն Արեան
ասելով.

Լրումն Հոգւոյն Սրբոյ։

Եւ ապա Առեալ զմի մասն ի ձեռն,
Ասասցէ արտասուօք և գոհութեամբ
առ Հայր և Որդի ի ծածուկ.

Հայր

Լ

# ՀԱՅՐ ՄԵՐ

որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քո։ Եւ լուսաւորեցեր մկրտութեամբ հոգեւոր աւազանին։ Արժանի արա ընդունիլ զսուրբ խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն․ տպաւորեա ի մեզ զշնորհս Հոգւոյդ Սրբոյ, որպէս ի սուրբ առաքեալսն որք ճաշակեցին եւ եղեն մաքրիչք ամենայն աշխարհի։ Եւ արդ՝ Տէր Հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մասնաւորեա ճաշակման երեկոյին աշակերտացն, բառնալով զխաւար մեղաց․ մի՛ հայիր յանարժանութիւնս իմ․ եւ մի՛ արգելուցես զշնորհս Հոգւոյդ Սրբոյ։ Այլ ըստ անբաւ մարդասիրութեան քում, պարգեւեա զսա քաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց։ Ոչ խոստացաւ եւ ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս թէ՝ ամէն որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, կեցցէ ի յաւիտեան։ Արդ՝ արա զսա մեզ ի քաւութիւն, զի որք կերիցեն եւ արբցեն ի սմանէ, հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ․ այժմ եւ միշտ եւ յաւի՛։

Խաղաղութիւն ամենեցուն․

Գոհանամ զքէն Քրիստոս Թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս հաղորդել Սրբ մարմնոյ եւ արեան քո։ Եւ այժմ աղաչեմ զքեզ մի՛ լիցի սա ինձ ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց․ առողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ․ եւ ի կատարումն ամենայն

գոր

գործոց առաքինութե՟։
Որպէս զի սրբեսցէ սա՛
զշունչս իմ․ և զհոգի և
զմարմին իմ։ Եւ արա-
ցէ զիս տաճար և բնակա-
րան ամենասբ՟ երրորդու-
թեանդ։ Զի ընդ սբս
քո արժանի եղէց փառա-
ւորել զքեզ ընդ հօր և
ընդ սբ՟ հոգւոյդ այժմ"։

Յովհաննու Ոսկեբերանին
Ասացեալ Աղօթք․

Գոհանամ և մեծացու-
ցանեմ և փառաւորեմ ըզ
քեզ տր՟ ած՟ իմ, զի զիս
զանարժանս արժանացու-
ցեր յաւուր յայսմիկ հա-
ղորդակից լինել ա՟ծային և
սոսկալի խորհրդոյ քում․
անարատ մարմնոյդ և
պատուական արեանդ․ վս՟
այսորիկ զոսա՛ ՚ի բարեխօ-
սութի՟ ունելով, աղաչեմ
յա՟մ աւուրս և ՚ի ժամա-
նակս կենաց իմոց ընդ

Ի


սրբութե՟ քո պահեա՛ զիս։
Որ՟ զի յիշելով զբարե-
գթութի՟ս քո և կենդանի
եղէց ընդ քեզ։ Որ վս՟
մեր չարչարեցար և մեռար
և յարեար․ մի՛ մերձեսցի
տր՟ իմ և ա՟ծ խորտակիչն,
կնքելով անձին իմոյ պատ-
ուական Արեամբդ քով։
Ա՛մենակարող մաքրեա՛
զիս սրբօք յամենայն մե-
ռելոտի գործոց իմոց, որ
միայնդ ես անմեղ։
Ամրացո՛ զկեանս իմ տր՟,
յա՟մ փորձութե՟․ և զպա-
տերազմողն իմ դարձո՛ յի-
նէն յետս, պատկառեալ
և ամաչեցեալ որչափ յառ-
նէ ՚ի վր՟ իմ։ Ամրացո՛
զգնացս մտաց և լեզուի
իմոյ, և զա՟մ ճանապարհս
մարմնոյ իմոյ։ Տէր հանա-
պազորդ ընդ իս, ըստ ան-
սուտ խոստմանց քոց,
թէ որ ուտէ զմարմին իմ,
և

և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի և ես ի նմա: Դու ասացեր մարդասէր, կացո զբանս ա͞ծային անլուծանելի հրամանաց քոց: Քանզի դու ես ա͞ծ ողորմութեան, և գթութեան և մարդասիրութեան և պարգևիչ ամենայն բարեաց. և քեզ վայելէ փառք հանդերձ Հարբդ և ամենասուրբ Հոգւովդ այժմ և միշտ՛:

Եւ ապա տեառնագրեսցէ զինքն. և խնդրեսցէ ի ճշմարտէն ա͞յ զայսպէս հայցուածս անձին իւրոյ. և ժողովրդեան, և աշխարհի. և թողութիւն խնդրեսցէ իւրոց ննջեցելոցն. թշնամեացն և ատելեացն. Եւ անդէն ահիւ և գոհութեամբ ճաշակեսցէ ի մարմնոյն. և արբցէ ի բաժակէն. ասելով.

Հաւատով հւ͞տամ յամենասուրբ երրորդութիւն ի Հայր և յՈրդի և ի Հոգին ս͞բ: Հաւատով ճաշակեմ զս͞բ և զկենդանարար և զփրկագործ Մարմինս քո ք͞ս ա͞ծ իմ յ͞ս ի թողութիւն մեղաց իմոց:

Հաւատով ըմպեմ զսրբարար և զմաքրիչ արիւնս քո ք͞ս ա͞ծ իմ յ͞ս ի թողութիւն մեղաց իմոց: Մարմին քո անապական լիցի ինձ ի կեանս: Եւ ս͞բ արիւն քո ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց:

Եւ սարկաւագն հաղորդեսցի. և յետ հաղորդելոյն գոչէ առ ժողովուրդն և ասէ բարձր.

Երկիւղիւ և հաւատով յառաջ մա՛.

Եւ Դպիրքն Բարձր ձայնիւ.

Աստուած մեր և տէր մեր երևե՛.

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն. բայց ոչ ի բերանն, այլ յափն տալով զսրբութիւնն. և ամենայն արժանաւորքն հաղորդեսցին. և յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ զժողովուրդն ընծայիւքն և ասասցէ.

Կեցո՛ տէր զժողովուրդս քո և օրհնեա՛ զժառանգութիւնս քո. հովուեա՛ և բարձրացո՛ զսոսա յայսմհետէ մինչև յաւիտեան:

Եւ Դպիրքն Երգեսցեն.

Լցաք ի բարութեանց քոց տէր ճա՛.

Քա

Քահանայն ասասցէ ՚ի ժամու.

Գոհանամք զքեզ Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սբ զեկեղեցի՝ տաճար սրբութեան, ուր փառաբանի անուն սբ Երրորդութեանդ:

Ալէլուիա:

Գոհանամք զքեզ Քրիստոս Թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով և արեամբ քով սրբով: Շնորհեա՛ զքաւութիւն և ըզ մեծ զողորմութիւն:

Ալէլուիա:

Գոհանամք զքեզ Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր սբ զեկեղեցի: Անարատ պահեա՛ հաւատով Երրորդութեանդ յայսմհետէ մինչև յաւիտեան:

Ալէլուիա:

Սրկ. Եւ ևս խաղաղութեան զՏր աղա՛.
Եւ ևս հաւատով ընկալեալք ածա՛.
Քհն. Գոհանամք զքեզ Տր որ կե՛.

Քահանայն ասասցէ ՚ի ժամու.

Գոհանամք զքեզ Քս ած մեր, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ՚ի սրբութիւն կենդանութեան: Սովիմբ պահեա՛ զմեզ սբս և անարատս, բնակեալ զմեօք քո աստուածային խնամօքդ: Ածեա՛ զմեզ յանդաստանի կամաց քոց սրբոց և բարերարաց: Որով ամրացեալք յամ բանսարկուին ընդդիմութեանց, քում և եթ արժանի եղիցուք լսել ձայնի: Եւ քեզ միայնոյ քաջայաղթ և ճշմարիտ հովուիդ հետևիլ: Եւ առ ՚ի քէն ընդունիլ զպատրաստեալ տեղի յարքայութեանդ երկնից: Ած մեր և տէր մեր և փրկիչ յս քս: Որ ես օրհնեալ ընդ Հօր և ընդ սբ Հոգւոյդ այժմ և․:

Խաղաղութիւն ամենեցուն.

Անքննելին անհաս, եր- րեակ ինքնութեամբ, հաւա- սիչ, ընդունօղ, և անբա- ժանելի, միասնական մի- երրորդութեամբ, վայելէ փառք իշխանութի և՛:

Եւ ապա առցէ զաւետարանն սուրբ ՚ի ձեռս իւր. Եւ երիցս երկրպագեալ համբուրեսցէ զսուրբ սեղանն. Եւ իջանե- լով ՚ի մէջ եկեղեցւոյն ասասցէ զաղօթս ՚ի Ձայն.

Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ Տր՝ և սբ առնես զյուսացեալս ՚ի քեզ. կեցո զժողովուրդս քո և օրհնեա զժառան- գութիւնս քո: Զլրումն եկեղեցւոյ քո պահեա: Սրբեա զոսա որք ողջու- նեցին սիրով զվայելչու- թիւն տան քոյ: Դու զմեզ փա- ռաւորեա ածային զօրու- թեամբ քով. և մի թողուր զյուսացեալս ՚ի քեզ: Զխաղաղութի պարգևեա ամ. աշխարհի:

Եկեղեցեաց, քահանա- յից, թագաւորաց քրիս- տոնէից և զինուորեալ ման- կանց նոցա. և ամ ժողովր- դեանս: Զի ամ տուրք բարիք. և ամ պարգևք կատարեալք, ՚ի վերուստ են իջեալք առ ՚ի քէն: Որ ես հայր լուսոյ և քեզ վայելէ փառք իշխա՛:

Եւ Դպիրքն Ասասցեն Երիցս.

Եղիցի անուն տեառն օրհնեալ.

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն Եւ ասասցէ ՚ի Ձայն.

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես Քրիս- տոս ած փրկիչ մեր: Որ լցեր զամ հայրական Տնօրէնութիւնս քո: Լցո և զմեզ հոգւովդ քով սրբով:

Ա-րէ---գն Օրթի.

Քհ Խաղաղութի ամե՛:

Դպ Եւ ընդ հոգւոյդ քում.

Սրկ երկիրպագութ լուսարուք.

Սուրբ Աւետարանիս յետ քնի որ ըստ Յօհաննու. Գլուխ ա. համար ա.

Ի հօրէ լուսոյ.



# ՍԿԶԲԱՆԷ ԷՐ

Բանն. և Բանն էր առ ած. և ած էր Բանն։ Նա էր ի սկզբանէ առ ած։ Ամենայն ինչ նովաւ եղեւ, և առանց նորա եղեւ և ոչ ինչ՝ որ ինչ եղեւն։ Նովաւ կեանք էր. և կեանքն էր լոյս մարդկան։ Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէր. և խաւար նմա ոչ եղեւ հասու։ Եղեւ այր մի առաքեալ յայ՝ անուն նմա յօհաննէս։ Սա եկն ի վկայութիւն՝ զի վկայեսցէ վս լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ Ոչ էր նա լոյսն. այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։ Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամ մարդ՝ որ գալոց է յաշխարհ։ Յաշխարհի էր, և աշխարհ նովաւ եղեւ. և աշխարհ զնա ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան։ Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս այ լինել՝ որոց հաւատային յանուն նր։ Որք ոչ յարենէ և ոչ ի կամաց մարմնոյ և ոչ ի կամաց առն, այլ յայ ծնան։ Եւ Բանն ՄԱՐՄԻՆ եղեւ՝ և բնակեաց ի մեզ։ Եւ տեսաք զփառս նր՝ զփառս իբրեւ զմիածնի առ ի հօրէ, լի շնորհօք և ճշմարտութբ։

Սղ Սբ խաչիւս աղաչեսցուք զտէր.

Քհ Պահպանեա զմեզ քս։

Սղ Օրհնեցից զտէր յամ ժամ.

Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն և ասասցէ բարձր.

## Օրհնեալ եղերուք ի՛՛։

Եւ Դպիրքն ասասցեն.

Ի տէր պարծեսցի անձն իմ.

Եւ ընդ սաղմոսելն դպրացն՝ բաշխեսցի նշխար։ Եւ յաւարտմանն Քահանայն դարձցի յարեւելս։ Եւ երկրպագեսցէ առաջի սբյ սեղանոյն երիցս, և ասասցէ.

## Տէր յս ած ողորմեա ինձ։

Եւ մտեալ յաւանդատունն մերկասցի ի զգեստուցն. Եւ երթիցէ խաղաղութբ.

Յիշատակարան Սրբոյ Սեղանոյ .

Շնորհիւ և ողորմութբ Ամենասբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ՝ աւարտեցաւ սբ գիրքս այս՝ որ կոչի ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ: որով ՚ի ձեռն Սբյն քահանայից՝ կատարի Աստուածային խորհուրդ:

ՏՊԱԳՐԵՑԱՒ .

՚Ի Հայրապետութեան լուսանկար Աթոռոյն Սբյ Էջմիածնի Տեառն Ներսէսի Սբյն Կաթուղիկոսի ամենայն հայոց:

Եւ ՚ի Պատրիարքութեան Առաքելական Սբյ Աթոռոյն Երուսաղէմի Տեառն Գաբրիէլի գերերջանիկ Պատրիարքի:

Վեհափառ հրամանաւ մեծի Արքայանիստ մայրաքաղաքիս կոստանդնուպօլսոյ Տեառն Պօղոսի շնորհազարդ արք Եպսի և բարեկարգ Պատրիարքի անդրիանուպոլսեցւոյ:

Արդ՝ որովհետև սպառեալք էին Աստուածային մատենիս այսորիկ առաջին տպագրեցեալքն. վասն որոյ կարի ջերմեռանդն գոլով ՚ի սէր սբյ պատարագին՝ բեշիկթաշճեան մահտեսի Սահակ բարեպաշտ աղայն՝ իւրով իսկ արդեամբ վերստին տպել ետ՝ միջնորդութեամբ Սբյ Աթոռոյն Էջմիածնի ՚ի Պօլիս եղեալ վէքիլ Տն Յարութեան շնորհալի վարդապետին Եդեսացւոյ, և սբյ Աթոռոյն Էջմիածնի յիշատակ ընծայեաց. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և հոգևոր և մարմնաւոր ծնողացն և ամ զարմից նորին և իւրն իսկ մասն և բաժին լիցի ՚ի շնորհաց սբյ պատարագին. և բարեգութն Աստուած ՚ի փառս իւր ընկալցի և զհոգիս ննջեցելոց նորին ՚ի լոյս երեսաց իւրոց հանգուսցէ, և կենդանեացն արևշատութիւն և յաջողութիւն պարգևեսցէ, և զորդիսն յերկարս կենաս հասուսցէ բիւրապատիկ զվարձս բարեաց. Ամէն:

Այսքէն ով սրբազնագործ պատարագամատոյցք՝ ՚ի վայելել ձեր զհոգևոր գանձս զայս, յիշեսջիք ՚ի մաքուր աղօթս ձեր և ՚ի խորհուրդս սբյն պատարագին զտպել տուօղ տէրն զվերոգրեալ յարգելին հանդերձ պարագայիւք կենդանեօք և ննջեցելովք իւրովք:

Եւ ես զտպագրիչ վարպետսն տպագրատանս, զմեզն Պատրիարքի յետին ծառայ անդրէաս վարդապետս ամենեցի, և զտառից կերտող զորդի մարտիրոսն բալուցի, և զերկոսին աշխատաւորս գործարանիս, զորդի մանուկն պալութցի, և զորդի յարութին բալուցի, զի և դուք յիշեալ լինիջիք ՚ի քսէ փրկչէն մերմէ. Ամէն.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ—Арм. ССР им. А. Мясникяна ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.